Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
Դավիթ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Բելառուսի Հանրապետության ք. Մինսկ, 2021թ. հունիսի 22-24-ը:

4. **Հրավիրող կողմը.**
Բելառուսի Հանրապետության պետական ռազմարդյունաբերական կոմիտե

5. **Գործուղման նպատակը.**
Մասնակցություն «MILEX-2021» սպառազինության և ռազմական տեխնիկայի 10-րդ միջազգային ցուցահանդեսին և ՀԱՊԿ ռազմարդյունաբերական համալիրի հարցերով հերթական նիստին:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Ցուցահանդեսի 2-րդ օրը ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի և գործարար խորհրդի նախագահի հետ կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են համագործակցության մի շարք ընթացիկ հարցեր: Վերջիններս նշել են, որ պլանավորում են անցկացնել մի շարք ոլորտային ցուցահանդեսներ և ակնկալում են Հայաստանի մասնակցությունը՝ դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՀԱՊԿ ռազմարդյունաբերական համալիրի հարցերով հերթական նիստի ժամանակ քննարկվել են օրակարգով նախատեսված հարցերը: Դրանցից որոշների վերաբերյալ քննարկումները շարունակվելու են ս.թ. սեպտեմբերին կայանալիք ՀԱՊԿ ՌՏՀՄՀ 19-րդ նիստի շրջանակներում, այդ թվում՝ ստանդարտացմանն առնչվող իրավակարգավորումների վերաբերյալ միջազգային և միջճյուղային փաստաթղթերի նախագծերի մշակումը «ՀԱՊԿ շրջանակներում սպառազինության և ռազմական տեխնիկայի ստանդարտացման մասին» համաձայնագրի շրջանակներում:

Առաջիկա նիստի ընթացքում քննարկվելու է նաև «Interpolitex» ցացահանդեսն այսուհետ ՀԱՊԿ շրջանակներում յուրաքանչյուր երկու տարին մեկ անցկացնելու

նպատակահարմարությունը, ընդ որում՝ հյուրընկալող կողմն ամեն անգամ կլինի ՀԱՊԿ անդամ հանդիսացող երկրներից մեկը՝ ռոտացիոն սկզբունքով:

Վերոնշյալ նիստից հետո Նախարարի տեղակալը հանդիպել է «Алмаз-Антей» միավորման ներկայացուցիչների հետ և քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպել է «Belarusian Cloud Technologies JLLC» (TM beCloud) ընկերության ներկայացուցիչների հետ: «beCloud» ընկերությունը հանդիսանում է հեռահաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի, ինչպես նաև Բելառուսի Հանրապետությունում «hosting» ծառայությունների և ամպային լուծումների առաջատար մատակարարներից մեկը, այն ծառայություններ է մատուցում իր սեփական ցանցերի և տվյալների կենտրոնի միջոցով: Հանդիպման ժամանակ քննարկվել է «beCloud»-ի և հայաստանյան ընկերությունների միջև համագործակցության հնարավարությունը, ինչպես նաև ուսումնասիրվել է ամպային տվյալների կենտրոնի և դրան առնչվող օրենսդրական փոփոխությունների փորձը:

Դ. Սահակյանն այցելել է «Великий камень» արդյունաբերական պարկ, որտեղ հանդիպում է ունեցել պարկի ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ ու քննարկել մի շարք հարցեր: Բելառուսական-չինական այս տեխնոպարկը նախատեսված է բարձր տեխնոլոգիական արդյունաբերական և բիզնես գործունեության համար, ներառյալ՝ հետազոտությունների անցկացման, արտադրության, պահեստավորման և նյութատեխնիկական ապահովման: Այն ունի ազատ տնտեսական գոտու բոլոր առավելությունները՝ զուգորդված եզակի հարկային և օրենսդրական արտոնություններով: Ուսումնասիրվել է «One Station» առցանց ընթացակարգերի համակարգը, որն իրենից ներկայացնում է աջակցության ծրագիր ներդրողների համար, մասնավորապես՝ հետևյալ հարցերում. ընկերություն ստեղծելիս աջակցություն, շինթույլտվություններ և արտադրական թույլտվություններ ստանալու համար, մուտքի արտոնագրերի և կացության թույլտվությունների ձեռքբերման ու այլ հարցերում:

Հանդիպում է տեղի ունեցել նաև «APT-e հեռանկարային հետազոտություններ և տեխնոլոգիա կրթության ոլորտում» կենտրոնի ներկայացուցիչների հետ: Կենտրոնը հանդիսանում է «Великий камень» արդյունաբերական պարկի ռեզիդենտ, և առաջարկում է SS ոլորտում կրթական ծրագրերի ինտերակտիվ դասընթացներ երեխաների և ծնողների համար: Դավիթ Սահակյանը կենտրոնի ներկայացուցիչների հետ քննարկել է Հայաստանում կրթական ծրագրի ներկայացման հնարավորությունները:

Այցի շրջանակներում նախարարի տեղակալը հանդիպել է նաև «Zenit-BelOMO» ընկերության ներկայացուցիչներին: Տվյալ ընկերությունը հիմնադրվել է 1973 թվականին, հանդիսանում է նախկին ԽՍՀՄ տարածքում օպտիկական շրջանակների և պահեստամասերի խոշորագույն արտադրողը:

Ցուցահանդեսի վերջին օրը Դավիթ Սահակյանը հանդիպել է «BIZON» ընկերության գլխավոր տնօրենի հետ և քննարկել «ԱրմՀայԹեք» ցուցահանդեսի կազմակերպչական հարցերը:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ «beCloud» ընկերության և «Великий камень» արդյունաբերական պարկի հետ համատեղ աշխատելու եզրեր գտնելու վերաբերյալ, մասնավորապես՝ հայ-բելառուսական ստարտափեր հիմնելու հնարավորության շրջանակներում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ՀԱՊԿ շրջանակներում կազմակերպվելիք ցուցահանդեսների առնչությամբ առաջարկները հայկական կողմին ներկայացնելու վերաբերյալ, որոնք ստանալուց ու ուսումնասիրելուց հետո հնարավոր կլինի հայտնել Հայաստանի դիրքորոշումը մասնակցության մասին:

«Zenit-BelOMO» ընկերության հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն ուսումնասիրելու համատեղ արտադրություն մշակելու հնարավորությունը: Հայկական արտադրողների հնարավորությունները և ընկերության տեսականին ուսումնասիրելուց հետո հնարավոր կլինի առավել ճշգրիտ առաջարկներ ներկայացնել: Հանդիպման ժամանակ նախարարի տեղակալը հրավիրել է ընկերության ներկայացուցիչներին՝ մասնակցելու Հայաստանում տեղի ունեցող «ԱրմՀայԹեք» ցուցահանդեսին, որի ընթացքում արդեն իսկ հնարավոր կլինի համատեղ գործունեության պայմանագրերի կնքումը:

Ցուցահանդեսի ժամանակ հանդիպում է տեղի ունեցել նաև սիրիական «Organization for Technological Industries (OTI)» ընկերության գլխավոր տնօրեն Ամռ Առմանզիի հետ, ով պատրաստակամություն է հայտնել մասնակցելու «ԱրմՀայԹեք» ցուցահանդեսին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Դավիթ Սահակյան 28.06.2021թ.